Հավելված
հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. հունվարի 27-ի թիվ 15-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021թ. հոկտեմբերի 13-ի թիվ 258-Ա որոշում
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ առողջապահության նախարարություն
Հաշվեքննության առարկան	ՀՀ առողջապահության նախարարության 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021թ. հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021թ. հոկտեմբերի 20-ից մինչև 2022թ. հունվարի 31-ը
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի յոթերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի նախագահ Լևոն Յոլյանը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ 5
3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5
4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6
4.1 «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի վերաբերյալ 7
Աշխատանքի վարձատրություն 7
Ներքին գործուղում 13
4.2 Պետական պատվերի շրջանակներում մատուցված ծառայությունների վերաբերյալ 14

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՊ	Հաշվեքննիչ պալատ
Նախարարություն	ՀՀ առողջապահության նախարարություն
ՊԱԳ	Պետական առոջապահական գործակալություն
ԲԿ	Բժշկական կենտրոն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԱԱՊԿ	Առողջության առաջնային պահպանման կենտրոն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

ՀՀ առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

Նախարարության առաքելությունն է առողջապահության զարգացման քաղաքականության, պետական նպատակային ծրագրերի մշակումը, դրանց իրականացման կազմակերպումը, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առաջնային և մասնագիտացված բժշկական օգնության ու ծառայությունների ապահովման կազմակերպումը, մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, բնակչության առողջության բարելավման միջոցառումների կազմակերպումը և առողջական վիճակի ուսումնասիրությունը, հաշմանդամության ու մահացության նվազեցման ծրագրերի մշակումը և իրագործումը:

Առողջապահության բնագավառում միջազգային ու միջգերատեսչական համագործակցության ապահովումը, երեխաների, կանանց կեցության և առողջության իրավիճակային վերլուծության կազմակերպումը, ոլորտի գերակա խնդիրների սահմանումը, նպատակային ծրագրերի մշակումն ու ներդրումը, առողջապահության բնագավառին առնչվող օրենսդրական, իրավական ակտերի նախագծերի մշակումը, ընդունված իրավական ակտերի նկատմամբ վերահսկողության ապահովումը, համակարգի գործունեության կազմակերպումը, կառավարումն ու ֆինանսավորումը ևս իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից:

Նախարարության աշխատանքների կազմակերպումն ուղղված է ՀՀ ողջ տարածքում մատչելի ու որակյալ առողջապահական ծառայությունների ապահովմանը:

3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Նախարարությանը բյուջետային ընդհանուր թվով 15 ծրագրերի իրականացման համար նախատեսվել է հատկացնել 79,167,708.50 հազ. դրամ: ՀՀ կառավարության որոշումների համաձայն ինն ամիսների ծախսերը նախատեսվել է ավելացնել 29,798,314.85 հազ. դրամով, ինչի արդյունքում 2021թ. ինն ամիսների ճշգրտված պլանը կազմել է 108,966,023.4 հազ. դրամ:

Ըստ ծրագրերի Նախարարության ցուցանիշները և փաստացի կատարողականը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

հազ. դրամ

ՀՀ	Ծրագրի անվանում	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամ. ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
	Ընդամենը	**114,497,192.3**	**141,280,557.9**	**108,966,023.4**	**94,904,135.4**	**102,743,822.9**
1	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	1,440.0	3,900.0	3,180.0	2,520.0	2,700.0
2	Հանրային առողջության պահպանում	8,626,568.8	25,377,083.8	23,946,199.3	20,677,242.2	20,281,369.5
3	Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր	3,030,270.2	3,765,170.6	3,224,628.1	2,090,390.2	809,647.3

4	Առողջության առաջնային պահպանում	27,882,490.3	27,371,304.4	18,129,829.9	18,075,422.5	21,438,249.5
5	Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	991,878.8	1,855,578.4	1,542,591.1	853,775.9	786,145.1
6	Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ	502,949.3	590,033.3	459,956.4	434,876.3	494,168.0
7	Դեղապահովում	3,490,799.4	3,909,779.4	2,687,999.6	2,532,415.4	2,359,587.7
8	Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ	271,261.6	241,261.6	157,400.0	157,317.2	185,001.1
9	Մոր և մանկան առողջության պահպանում	19,082,132.3	18,671,876.1	16,570,523.6	12,372,749.5	13,908,058.6
10	Շտապ բժշկական օգնություն	5,000,000.0	5,000,000.0	3,800,000.0	3,332,416.1	3,726,599.8
11	Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	15,801,989.1	17,801,989.1	12,064,292.9	11,045,259.3	12,573,919.4
12	Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	27,205,517.3	34,024,039.8	24,636,407.4	21,865,071.3	24,326,561.0
13	Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր	2,609,895.2	2,606,265.4	1,684,939.1	1,457,863.7	1,712,736.1
14	Ռազմական դրությամբ պայմանավորված առողջապահական միջոցառումների ապահովում	-	-	-	-	131,406.0
15	Սոցիալական փաթեթների ապահովում	-	12,276.0	8,076.0	6,816.0	7,674.0

4. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության 2021թ. ինն ամիսների փաստացի ծախսը կազմել է 102,743,822.9 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 94,904,135.4 հազ. դրամ:

Դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին: Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների, Նախարարության դեբիտորական պարտքը 01.10.2021թ. կազմել է 3,797,336.54 հազ. դրամ, որը հիմնականում ձևավորվել է կորոնավիրուսային վարակի պատվաստանյութի ձեռքբերման (890,000.0 հազ. դրամ) և դեղապահովման ծրագրի (1,150,619.19 հազ. դրամ) շրջանակներում պահուստավորված միջոցների հաշվին:

Կրեդիտորական պարտքերը 01.10.2021թ. դրությամբ կազմել են 10,230,100.8 հազ. դրամ, ինչը պայմանավորված է նրանով, որ 2021թ. սեպտեմբեր ամսին առաջացած պարտավորությունների վճարումները կատարվել են հոկտեմբեր ամսին:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2020թ. դեկտեմբերի 16-30-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից Նախարարությանը մատուցած ծառայությունների համար փաստացի վճարումը իրականացվել է 2021թ.-ին՝ տվյալ տարվա բյուջետային միջոցների հաշվին: Նախարարությունը չպահպանելով գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության, ինչպես նաև ՀՀՀՀՀՀ ստանդարտի պահանջները, 2021թ. դեկտեմբերի 16-30-ն ընկած ժամանակահատվածում փաստացի մատուցված ծառայությունների համար ծախսագրում չի իրականացրել, այն որպես կրեդիտորական պարտք չի ճանաչել և դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվության մեջ չի ներառել:

4.1 «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի վերաբերյալ

«ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն «Առողջապահության ոլորտի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի իրականացման համար 2021թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 991,878.8 հազ. դրամ, որից 858,352.3 հազ.դրամն ուղղվել է աշխատանքի վարձատրությանը, այդ թվում՝ 667,607.3 հազ. դրամը նախատեսված է եղել «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ - 4111» հոդվածով, 137,595.1 հազ.դրամը՝ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հավելավճարներ - 4112» հոդվածով, 53,149.9 հազ.դրամը՝ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում - 4113» հոդվածով:

Աղյուսակ 2

հազ. դրամ

	Հոդվածի անվանումը	Տարեկան ճշտված պլան	Հաշվետու ժամ. ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1,070,637.90**	**757,715.80**	**699,021.06**	**781,064.77**
1	- Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	667,607.30	445,071.50	438,366.25	488,527.90
2	- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	208,111.20	162,246.20	136,268.23	150,107.20
3	- Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	53,149.90	53,149.90	53,149.90	53,149.90
4	- Էներգետիկ ծառայություններ	30,300.00	23,762.50	15,686.20	15,564.15
5	- Կոմունալ ծառայություններ	718.40	538.80	391.50	442.44
6	- Կապի ծառայություններ	9,050.90	6,183.20	3,353.93	3,447.81
7	- Ապահովագրական ծախսեր	320.00	320.00	-	-
8	- Ներքին գործուղումներ	9,779.30	6,845.50	3,616.00	3,616.00
9	- Համակարգչային ծառայություններ	65,963.20	39,639.20	38,606.25	55,666.88
10	- Տեղեկատվական ծառայություններ	134.80	-	-	-
11	- Կառավարչական ծառայություններ	9,700.00	9,700.00	-	3,233.33
12	- Ներկայացուցչական ծախսեր	1,500.00	1,050.00	289.86	278.29
13	- Մասնագիտական ծառայություններ	972.00	425.00	96.82	96.82
14	- Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	-	-	-	-
15	- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	3,643.80	2,074.20	1,462.28	2,364.47
16	- Գրասենյակային նյութեր և հագուստ	1,698.00	849.00	676.58	1,048.24
17	- Տրանսպորտային նյութեր	7,539.10	5,410.80	5,410.00	1,556.92
18	- Կենցաղային և հանրային սննդի նյութեր	450.00	450.00	345.36	553.01
19	- Պարտադիր վճարներ	-	-	1,301.90	1,411.41

➢ Աշխատանքի վարձատրություն

(411100-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ, 411200-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ, 411300-Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում)

Առողջապահության ոլորտի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի իրականացման համար ՀՀ վարչապետի 11.06.2018 թիվ 706-Ա որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 2-րդ կետի համաձայն Նախարարության համար սահմանվել է 180 հաստիքային միավոր, (որից 4 ղեկավարի

տեղակալ, այդ թվում 1-ը առաջին տեղակալ, 4-ը՝ ղեկավարի օգնական, 2-ը ղեկավարի տեղակալի օգնականներ, 3-ը՝ ղեկավարի խորհրդականներ):

Նախարարության 180 հաստիքային միավորը նախարարի 06.03.2019 թիվ 27-Ա հրամանի համաձայն բաշխվել է հետևյալ կերպ՝ կենտրոնական ապարատ 103 միավոր, (որից քաղաքական և հայեցողական պաշտոններ 15, քաղաքացիական պաշտոններ՝ 82 և տեխնիկական սպասարկող անձնակազմ՝ 6), լիցենզավորման գործակալություն 7 միավոր, պետական առողջապահական գործակալություն՝ 70 միավոր (որից 63 քաղաքացիական ծառայող, 7 քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող):

Հաշվետու ժամանակահատվածի հիմնական ֆինանսական արդյունքների վերաբերյալ.

ՀՀ կառավարության 18.02.2021թ. թիվ 217-Ն որոշման թիվ 1 հավելվածի համաձայն «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» (610,516.1 հազ. դրամ) ծրագրից 70,516.1 հազ. դրամը պակասեցվել և ուղղվել է «Դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ - 4112» հոդվածին (այն կազմել է 208,111.2 հազ. դրամ):

2021թ. ճշտված նախահաշվով աշխատանքի վարձատրության բյուջեն կազմել է 928,868,4 հազ. դրամ, որից 9 ամիսների համար նախատեսված է եղել 646,068.8 հազ. դրամ, այդ թվում՝ 4111 հոդվածով՝ 445,071.50 հազ. դրամ, 4112 հոդվածով՝ 147,847.4 հազ. դրամ, 4113 հոդվածով՝ 53,149.9 հազ. դրամ: Նախարարության կողմից ներկայացված «Հիմնարկների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» 2021թ. 9 ամիսների հաշվետվության համաձայն, աշխատանքի վարձատրություն հոդվածով նախատեսված 646,068.8 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 627,784.38 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 691,785,0 հազ. դրամ, կրեդիտորական պարտքը՝ 63,936.2 հազ. դրամ, դեբիտորական պարտքը՝ 18.9 հազ.դրամ:

Աղյուսակ 3-ում ներկայացվել է 2021թ. 9 ամիսների ճշտված բյուջեով նախատեսված պլանը, դրամարկղային և փաստացի կատարված ծախսերը:

Աղյուսակ 3

հազ. դրամ

Հոդված	Հոդվածի անվանումը	9 ամիսներ			
		Ճշտված պլան	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Պլանի նկատմամբ գերածախս
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելումներ	445,071,5	438,366.25	488,527.9	43,456.4
4112	Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	147,847.4	136,268.3	150,107.2	2,259.8
4113	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	53,149,9	53,149,9	53,149.9	-
	Ընդամենը աշխատողների աշխատավարձեր	646,068,8	627,784.38	691,785.0	45,716.2

Ինչպես երևում է աղյուսակից, 2021թ. 9 ամիսների ճշտված բյուջեով աշխատողների աշխատավարձեր հոդվածով նախատեսված 646,068.8 հազ. դրամի դիմաց համաձայն

«Հիմնարկների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվության փաստացի ծախսը կազմել է 691,785.0 հազ. դրամ, կամ թույլ է տրվել 45,716.2 հազ. դրամով ավելի գերածախս, այդ թվում՝ 4111 հոդվածով՝ 43,456.4 հազ.դրամ, 4112 հոդվածով՝ 2,259.8 հազ. դրամ:

«Հիմնարկների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» 2021թ. 9 ամիսների հաշվետվության և Ընդլայնված (Շախմատաձև) հաշվետվություն համադրումից արձանագրվել է, որ հաշվետվությունում արտացոլված փաստացի ծախսերում առկա է անհամապատասխանություն:

Աղյուսակ 4

հազ. դրամ

Հոդված	Հոդվածի անվանումը	9 ամիսների փաստացի ծախսեր		
		Հաշվետվությունով ներկայացված	Շախմատաձև հաշվետվությունով փաստացի	տարբերություն
4111	Աշխատողների աշխատավարձեր և հավելումներ	488,527.9	481,263.8	7,264.1

2021թ. 9 ամիսների ընդլայնված (Շախմատաձև) հաշվետվության վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ 4111 հոդվածով փաստացի ծախսը կազմել է 481,263.8 հազ. դրամ: Արդյունքում «Հիմնարկների կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվությունում 4111 հոդվածով 7,264.1 հազ.դրամ ավելի ծախս է ցույց տրվել:

Այսպիսով, 2021թ. 9 ամիսների համար 4111 հոդվածով հաստատված 445,071.5 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 481,263.8 հազ.դրամ, ինչպես նշված է աղյուսակ 2-ում, այլ ոչ թե՝ 488,527.9 հազ. դրամ, ինչպես նշված է աղյուսակ 4-ում, իսկ հոդվածի գերածախսը կազմել է 36,192.3 հազ.դրամ:

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ՝ 4111 **<u>հոդվածով առաջացած գերածախսը պայմանավորված է հետևյալ անհամապատասխանություններով.</u>**

- Նախարարությունը չի պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար աշխատակիցների ամենամյա հասանելիք արձակուրդը լիարժեք չի տրամադրել տվյալ աշխատանքային տարում: Միայն 2021թ. տարեսկզբին 2018-2020թթ. չտրամադրված արձակուրդի օրերի թիվը կազմել է 440 աշխատանքային օր, որը տրամադրվել է 2021թ. ընթացքում:
- Նախարարությունը չի պահպանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի, ինչպես նաև ՀՀ առաջին փոխվարչապետի 12.12.2018թ. թիվ 441-Ն որոշման 29.1-րդ կետի պահանջը՝ 4111 հոդվածում չունենալով աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներ՝ 2020թ. դեկտեմբերի 28-ի գլխավոր քարտուղարի 534-Ա, 535-Ա, 536-Ա, 537-Ա հրամանների համաձայն փորձաշրջան անցնող նորանշանակ աշխատակիցների աշխատանքները

համակարգելու համար թվով 4 աշխատակցի պարգևատրել է 2,075.3 հազ.դրամ գումարով: Նախարարությունը չունենալով տնտեսված միջոցներ չի կարողացել վճարել 2,075.3 հազ.դրամը, ավելին 2020թ. տարեկան հաշվետվությունով անգամ չի ձևակերպել այն որպես կրեդիտորական պարտք: Վերոնշյալ գումարը վճարվել է 2021թ. բյուջեի հաշվին:

Եզրահանգում: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները չպահպանելու հետևանքով Նախարարությունն ունեցել է 36,192.3 հազ. դրամի գերածախս:

Աշխատավարձի հաշվարկման տեղեկագրերի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի հաշվեքննությամբ արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ: Մասնավորապես.

Պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցի անհամապատասխանություն

- Նախարարության օտարերկրյա ներդրումների ներգրավման բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ս.-ն (2020թ. օգոստոսի 16-ի թիվ 239-Ա հրաման) իր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Նույն օրը (թիվ 240-Ա հրաման) վերջինս զբաղեցրել է միջազգային հարաբերությունների վարչության օտարերկրյա ներդրումների ներգրավման բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնը: 2021թ. մայիս ամսին մրցույթում Հ.Ս.-ն հաղթող է ճանաչվել և նշանակվել վերոնշյալ պաշտոնում (25.06.2021թ. թիվ 65-Ա հրաման): «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ե) ենթակետի համաձայն օրենքի գործողության ոլորտը տարածվում է պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վրա (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող՝ պետական ծառայող չհանդիսացող անձանց, որոնց վրա տարածվում են միայն սույն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները), իսկ նույն Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պետական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձը (բացառությամբ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվից պաշտոն զբաղեցնող անձի) վարձատրվում է տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխան սանդղակի առաջին մակարդակին համապատասխանող պաշտոնային դրույքաչափով: Սակայն, ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչությունը չի պահպանել Օրենքի հիշյալ պահանջը, և ղեկավարվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 23.10.2018թ. 07.7.4/35671-18 շրջաբերական նամակով, համաձայն որի գրասենյակը հղում կատարելով «Քաղաքացիական ծառայության մասին» 23.03.2018թ. ՀՕ 205-Ն ՀՀ օրենքին, պարզաբանել է, որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի

2-րդ հոդվածի 1-ին մասի ե) ենթակետով սահմանված «Ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող՝ պետական ծառայող չհանդիսացող անձ» «Քաղաքացիական ծառայության մասին» 23.03.2018թ. ՀՕ 205-Ն ՀՀ օրենքով նախատեսված չէ, ուստի նույն Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձ հանդիսացող պետական ծառայողների (քաղաքացիական ծառայողների) համար 2018թ. հուլիսի 1-ից կիրառելի չէ և վերոհիշյալ անձանց պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը սահմանվել է ոչ թե հիշյալ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի համապատասխան՝ այլ շարունակվել է վճարել նախկին պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցով, կամ ավելի բարձր մակարդակի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակցով:

Արդյունքում 2021թ. 9 ամիսներին Հ.Ս.-ին վճարվել է 207639 դրամ ավելի աշխատավարձ:

- Ա.Հ.-ն 19.02.2007-22.04.2008թթ. պայմանագրային կարգով զբաղեցրել է Նախարարության բժշկական օգնության կազմակերպման վարչության Մոր և մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը: 2008թ. մրցույթի արդյունքում վերջինս նշանակվել է ՊԱԳ-ի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում: 2021թ. հունվարի 1-ի դրությամբ հունվար-ապրիլ ամիսների համար Ա.Հ.-ի պաշտոնի հաշվարկման գործակիցը կազմել է 4.01, սակայն նախարարությունը 2008թ.-ի ապրիլից վերջինիս ստաժը հաշվելու փոխարեն հաշվել է 2007թ. փետրվարից, ինչի արդյունքում Ա.Հ.-ին 9 ամիսներին վճարել է 52262 դրամ ավելի աշխատավարձ:
- Ա.Մ.-ն 25.09.2014թ. մինչև 11.03.2015թ. պայմանագարյին հիմունքներով զբաղեցրել է ՊԱԳ-ի Երևանի քաղաքային կենտրոնի գլխավոր մասնագետի պաշտոնը: 2015թ. ապրիլ ամսին կայացած մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել և 30.04.2015թ. նշանակվել է ՊԱԳ-ի վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում՝ ստանալով 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: 13.06.2018թ. ստացել է 2-րդ դասի խորհրդականի աստիճան: Ա.Մ-ի պաշտոնային դրույքաչափը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ հունվար-ապրիլ ապիսների համար կազմել է 3.64, մայսիսի 1-ից՝ 3.76 գործակից: Սակայն, Նախարարությունը սահմանել է ավելի բարձր գործակից, արդյունքում 9 ամիսներին Ա.Մ.-ին վճարվել է 101306 դրամ ավելի աշխատավարձ:
- Ս.Շ.-ն 2014-2015թթ. ապրիլ ամիսը աշխատել է նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչությունում որպես փորձագետ իրավաբան: 03.04.2015թ. թիվ 60-Ա հրամանով՝ 03.04.2015-04.04.2017թթ.՝ պայմանագրային կարգով նախարարության բժշկական օգնության վարչությունում որպես վարչության պետի իրավական հարցերով օգնական: 04.04.2017թ. թիվ 58-Ա հրամանով 04.04.2017-20.02.2018թթ. վերջինս զբաղեցրել է ՊԱԳ-ի փաստաթղթերի

հսկողության և պայմանագրային ծառայությունների բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը: 2018թ. մարտի 15-ի թիվ 131-Ա հրամանով Ս.Շ.-ն զբաղեցրել է ՊԱԳ-ի առողջապահական և ֆինանսական ցուցանիշների ծրագրավորման, հոսքերի կառավարման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը: 05.06.2018թ.. կայացած մրցույթում Ս.Շ.-ն ճանաչվել է հաղթող և 07.06.2018թ. թիվ 215-Ա հրամանով նշանակվել ՊԱԳ-ի առողջապահական և ֆինանսական ցուցանիշների ծրագրավորման, հոսքերի կառավարման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնում:
Ս.Շ.-ի ստաժը 2018թ. հունիսի 7-ից հաշվելու փոխարեն, հաշվել է 2017թ. ապրիլ ամսից, ինչի հետևանքով նրան ավելի է վճարվել 21826 դրամ:

- Կ.Ա.-ն աշխատակազմի ղեկավարի 04.11.2014թ. թիվ 400-Ա հրամանով նշանակվել է իրավաբանական վարչության օրենսդրության կատարելագործման և վերլուծության բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնում: 2018թ. հայտարարված մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո 09.02.2018թ. երեք ամիս փորձաշրջանով զբաղեցրել է իրավաբանական վարչության օրենսդրության կատարելագործման և վերլուծության բաժնի պետի պաշտոնը: Կ.Ա.-ի պաշտոնային դրուքաչափի հաշվարկման գործակից 2021թ. հունվարի-փետրվար ամիսներին 4.14, իսկ մարտի 1-ից 4.27 գործակցով հաշվելու փոխարեն հաշվել է 4.55 գործակցով, արդյունքում Կ.Ա.-ին ավելի է վճարվել է 72754 դրամ:
- Լ.Մ.-ն աշխատակազմի ղեկավարի 17.10.2014թ. թիվ 384-Ա հրամանով զբաղեցրել է առաջին բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը: Մրցույթում հաղթող ճանաչվելու արդյունքում 02.06.2015թ. թիվ 105-Ա հրամանի համաձայն երեք ամիս փորձաշրջանով նշանակվել է գլխավոր մասնագետ: Լ.Մ.-ի պաշտոնային դրուքաչափի հաշվարկման գործակիցը 2015թ. հունիս ամսից հաշվելու փոխարեն հաշվել է 2014թ. հոկտեմբեր ամսից, ինչի արդյունքում հունվար-հունիս ամիսներին Լ.Մ.-ին ավելի է վճարվել է 35713 դրամ:
- Հ.Ի.-ն ՊԱԳ-ի պետի տեղակալի պաշտոնում է նշանակվել 2014թ. օգոստոսի 13-ից: 2021թ. հունվարի 1-ի դրությամբ Հ.Ի.-ի պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցը կազմել է 5.52 գործակից, սակայն նախարարության կողմից հունվար-ապրիլ ամիսներին սահմանվել է 5.34 գործակից, կամ յուրաքանչյուր ամիս պակաս է վճարվել 0.18 գործակցով, արդյունքում վերջինիս 48675 դրամ պակաս է վճարվել:
- Վ.Հ.-ն աշխատել է ՊԱԳ-ում որպես պահակ: վերջինիս պաշտոնային դրուքաչափի հաշվարկման գործակիցը սահմանվում է ՀՀ կառավարության 03.07.2014թ. «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրուքաչափերը սահմանելու մասին» թիվ 737 որոշմամբ հաստատված հավելված 2-ով, համաձայն որի՝ պահակի պաշտոնային դրույքաչափը կազմել է 72754 դրամ: Հիմք ընդունելով «ՀՀ-ում նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ

օրենքի 1-ին հոդվածի պահանջը՝ համաձայն որի նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 68000 դրամ, ապա ներառյալ լրավճարը պահակի պաշտոնային դրույքաչափը կազմում է 69348 դրամ ներառյալ ՀՀ օրենդրությամբ սահմանված հարկերը: ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի 1-ին մասի համաձայն գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար վճարվում է ոչ պակաս, քան ժամային դրույքաչափի 30 տոկոսի չափով, նույն օրենսգրքի 148-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գիշերային ժամանակ է համարվում ժամը 22-ից մինչև 6-ը համաձայն որի 9 ամիսների համար Վ.Հ.-ի աշխատավարձը կազմում է 955.6 հազ.դրամ, սակայն նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 03.07.2014թ. 737 որոշման և ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջները, և Վ.Հ.-ին վճարել է 1,792.1 հազ.դրամ աշխատավարձ՝ 836.5 հազ. դրամով ավելի:

- Ն.Պ.-ն 2021թ. հունվար ամսին աշխատել է 3 աշխատանքային օր՝ գլխավոր քարտուղարի 11.01.2021թ. թիվ 05-Ա հրամանով 2021թ. հունվարի 13-29-ը հատկացվել է 2019-2020թթ. արձակուրդից չօգտագործած 12 աշխատանքային օրը: Նախարարությունը հաշվի չի առել այն, որ Ն.Պ.-ն գտնվում է արձակուրդում, և 2021թ. հունվար ամսին վճարել է նաև 15 աշխատանքային օրվա աշխատավարձը:

Իրավական ակտերի պահանջները չպահպանելու վերաբերյալ

28.07.2021թ. Ս.Շ.ն ներկայացրել է N152591 անաշխատունակության թերթիկ՝ հղիության և ծննդաբերության արձակուրդ տրամադրելու վերաբերյալ, համաձայն որի 2021թ. հուլիսի 19-ից մինչև դեկտեմբերի 5-ը 140 օրացուցային օր գտնվել է ֆիզ. արձակուրդում: Նախարարությունը 140 օրացուցային օրվա փոխարեն հատկացրել է 130 օրացուցային օր, տեղեկագրում ներկայացվել է աշխատանքի ներկայացած և վճարել է աշխատավարձ: Չի պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջը, որի համաձայն աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ 140 օր:

ՊԱԳ-ի գլխավոր մասնագետ Ա.Բ.-ն պաշտոնը ստանձնել է 2021թ. մայիսի 24-ին, ազատվելով իրավախորհրդատուի պաշտոնից: Վերջինիս կողմից ներկայացված N223993 անաշխատունակության թերթիկի համաձայն 2021թ. օգոստոսի 20-23-ը ներառյալ եղել է անաշխատունակ, աշխատանքի պետք է ներկայանար օգոստոսի 24-ից, սակայն ՊԱԳ-ի կողմից ներկայացված տեղեկագրի համաձայն օգոստոսի 23-ին նշված է եղել ներկա: Նախարարությունն անտեսելով անաշխատունակության թերթիկը, հիմք է ընդունել տեղեկագիրը և 2 օրվա փոխարեն վճարել է 1 օրվա անաշխատունակության նպաստ:

Ներքին գործուղում

Նախարարությունը չի պահպանել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշման պահանջները՝ գործուղման ծախսերի հատուցումը կատարել է ոչ թե գործուղումից առնվազն մեկ օր առաջ, այլ գործուղումից վերադառնալուց հետո՝ կարգով

սահմանվածից ուշ: Բացառությամբ 1 գործուղման (հրաման 2626-Ա, 09.07.2021թ.), երբ 3 աշխատակցի վճարվել է գործուղման կանխավճար ընդ որում հրամանով 4 աշխատակից է գործուղվել, իսկ վերադառնալուց հետո կատարվել է վերջնահաշվարկ: 2021թ. 3-րդ եռամսյակի գործուղման ծախսերի մի մասը նույնպես փոխհատուցվել են թերի (ոչ ամբողջությամբ), նշված ծախսերը չեն հաշվեգրվել, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մասին հաշվետվության մեջ չեն արտացոլվել:

Գործուղման փաստաթղթերի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է, որ 2021թ. 9 ամիսներին ներքին գործուղման ծախսերի հաշվետվություններում հիմնականում լրացված չէ ճանապարհածախսի, օրավարձի, գիշերավարձի, ստացված կանխավճարի, մնացած ստանալիք և ընդամենը ծախսերի տողերը: Առանձին դեպքերում դրանք նաև ստորագրված չեն գործուղվող աշխատակցի կողմից:

Նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության խորհրդատու Ա.Ս.-ն գործուղվել է Մարտունի 09.07.2021թ., սակայն հրամանը տրվել է գործուղումից 1 օր հետո և հրամանի 4-րդ կետում նշված է. «Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2021 թվականի հունիսի 8-ից ծագած հարաբերությունների նկատմամբ»:

Նախարարի 23.07.2021թ. թիվ 443-Ա և 26.08.2021թ. թիվ 528-Ա հրամաններով Նախարարության արտակարգ իրավիճակների և զորահավաքային նախապատրաստության բաժնի գլխավոր համակարգող-խորհրդատու Ա.Ա.-ն գործուղվել է համապատասխանաբար Վայոց Ձորի և Կոտայքի մարզեր, սակայն գործուղման ծախսերի հաշվետվությունը բացակայում է:

Նախարարի 26.07.2021թ. թիվ 451-Ա հրամանով Լ.Ն.-ն գործուղվել է Մարտունի, սակայն գործուղման հիմք հանդիսացող փաստաթղթերը բացակայել են: Համաձայն նախարարի 29.03.2021թ. թիվ 994 հրամանի գործուղումը պետք է իրականացվեր 2021թ. ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ, սակայն այն իրականացվել է 2021թ. հուլիսի 22-ից մինչև հուլիսի 25-ը ներառյալ: Նույն հրամանով ստեղծված հանձնաժողովի նախագահ է նշանակվում ՊԱԳ-ի առողջապահական և ֆինանսական ցուցանիշների ծրագրավորման, հոսքերի կառավարման և վերլուծության բաժնի գլխավոր բժիշկ Ս.Շ.-ն, բայց գործուղման փաստաթղթերում վերջինիս անունով որևէ փաստաթուղթ. չկա: Հրամանով գործուղված հանձնաժողովի մնացած վեց անդամները գործուղված լինելով Ամասիա գիշերակացի համար փաստաթղթեր են ներկայացրել Արթիկ քաղաքում գտնվող հյուրանոցային ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտից: Անհասկանալի է գործուղման և գիշերակացի համար ընտրված վայրի մոտավորապես 60կմ հեռավորության փաստը: Գործուղման ծախսերի հաշվետվությունում լրացված չէ ճանապարհածախսի, օրավարձի, գիշերավարձի, ստացված կանխավճարի, մնացած ստանալիք ու ընդամենը ծախսերի տողերը և ստորագրված չէ:

4.2 Պետական պատվերի շրջանակներում մատուցված ծառայությունների վերաբերյալ

2021թ. ինն ամիսների փաստացի կատարողականի և կատարված վճարումների համապատասխանությունը ստուգելու նպատակով իրականացվել է Էլեկտրոնային առողջապահության ARMED և պետական բյուջեի գանձապետական գործառնությունների

LS-FINANCE համակարգերի տվյալների համադրություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. սեպտեմբեր ամսին մատուցված ծառայությունների համար վճարումը կատարվել է հաջորդ ամիս և դրանք առաջին կիսամյակի գանձապետական գործառնությունների մեջ ներառված չեն, համադրումը իրականացվել է Էլեկտրոնային առողջապահության ARMED համակարգի 2021թ առաջին 8 ամիսների կատարողականի և 30.06.2021թ. դրությամբ LS-FINANCE համակարգի միջոցով կատարված փոխանցումների հիման վրա: Իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ ընդհանուր թվով 12 դեպքում առկա է ԱՐՄԵԴ համակարգի կատարողականից ավելի վճարում՝ 1,382,719.1 հազ. դրամի չափով: Ամբողջական ցանկը ստորև ներկայացված է աղյուսակում:

Աղյուսակ 5

դրամ

ՀՎՀՀ	Անվանում	Կատարողական	Վճարում	Կատարողականից ավել վճարում
01508606	Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ	310,074,221	768,737,384	458,663,163
01222567	Նատալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն	4,325,694,273	4,644,430,397	318,736,124
01243384	ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	584,657,400	865,174,446	280,517,046
00010235	Պրոֆ.Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ	686,503,628	863,976,000	177,472,372
00011624	ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	7,880,250	134,805,843	126,925,593
00886932	Կախվածությունների բուժման ազգային կենտրոն ՓԲԸ	256,862,332	273,981,739	17,119,407
00475611	Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն ՓԲԸ	768,601,480	770,041,400	1,439,920
02512026	Արամյանց ԲԿ ԱՓԲԸ	90,231,100	91,264,759	1,033,659
07613775	Գիսանե ՍՊԸ	37,000	500,550	463,550
02507818	Շտապ բուժօգնություն ՓԲԸ	1,342,588,280	1,342,802,200	213,920
00194198	Ջենոմա ՍՊԸ	333,000	405,000	72,000
02598368	ՄԻԲՍ ՍՊԸ	112,055,000	112,117,400	62,400

Բացի կատարողականից ավելի վճարումների, միևնույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ կատարվել է կատարողականից պակաս վճարումներ, որի ընդհանուր ծավալը կազմել է 2,981,523.8 հազ դրամ:

Առավել պակաս վճարված կազմակերպությունների ցանկը ներկայացված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

դրամ

ՀՎՀՀ	Անվանում	Կատարողական	Վճարում	Կատարողականից պակաս վճարում

00124396	Մեղլայն կլինիկ ՍՊԸ	1,306,087,682	537,187,500	768,900,182
01203375	Արմենիա ՀԲԿ	2,252,663,950	2,024,533,570	228,130,380
01564591	Իռ-Վինգ ՍՊԸ	371,651,987	211,103,800	160,548,187
01503448	Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ	2,280,724,631	2,167,156,900	113,567,731
00403857	Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ	5,266,103,298	5,153,432,280	112,671,018
01202252	Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի,մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստտիտուտ ՓԲԸ	1,013,614,569	959,219,860	54,394,709
06805261	Սպիտակի բժշկական կենտրոն ՓԲԸ	292,678,590	240,195,100	52,483,490
05539526	Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ	832,648,200	780,484,899	52,163,301
04220707	Արտաշատի բժշկական կենտրոն ՓԲԸ	703,043,089	660,682,971	42,360,118
01806173	Թիվ 19 պոլիկլինիկա ՓԲԸ	521,426,411	479,188,300	42,238,111
00009615	Արաբկիր Բժշկական Համալիր ԵԴԱԻ ՍՊԸ	2,507,925,755	2,471,968,470	35,957,285
01508793	Նորք Մարաշ ԲԿ ՓԲԸ	2,149,390,040	2,113,436,700	35,953,340
03522199	Ռ. Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն ՓԲԸ	609,948,250	576,178,407	33,769,843
04418892	"Զարիշատ/Արամ/ Մարտին Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ ՓԲԸ"	840,834,486	807,974,400	32,860,086
01201955	Թիվ 20 պոլիկլինիկա ՓԲԸ	270,612,648	238,636,339	31,976,309
00805413	Թիվ 12 պոլիկլինիկա ՓԲԸ	264,574,966	234,638,348	29,936,618
03017721	Հրազդանի բժշկական կենտրոն ՓԲԸ	614,847,536	585,498,200	29,349,336
02235034	Սուրբ Աստվածամայր ԲԿ ՓԲԸ	1,319,281,980	1,291,624,000	27,657,980
06945592	Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ	1,408,464,414	1,381,706,340	26,758,074
01002804	Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ	1,582,473,982	1,556,264,340	26,209,642
06907013	Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա ՊՓԲԸ	234,267,804	211,483,000	22,784,804
05503178	Գյումրու Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա ՓԲԸ	170,987,490	150,058,151	20,929,339
09211641	Գորիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	557,225,462	536,320,099	20,905,363

Հաշվի առնելով այն, որ մի շարք միջոցառումների համար կատարողականի գնահատումը իրականացվել է առանց ԱՐՄԵԴ համակարգի, ինչպես նաև ծրագրային բյուջետավորման շրջանակներում ֆինանսավորումը իրականացվել է ըստ միջոցառումների, յուրաքանչյուրի համար առանձին գանձապետական հաշվի միջոցով, կատարողականի հետագա ուսումնասիրությունը ևս կատարվել է ըստ առանձին միջոցառումների:

2021թ. 9 ամիսներին պետական պատվերի շրջանակներում մատուցված ծառայությունների դրամարկղային ծախսը կազմել է 94,904,135.4 հազ. դրամ: Հաշվեքննությունն իրականացվել է հաշվեքննության առաջադրանքի հիման վրա՝ էականության հատուկ շեմից բարձր հետևյալ միջոցառումների համար.

Աղյուսակ 7

դրամ

	Միջոցառման անվանում	Ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
1	Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ	17,872,773.90	17,818,562.46	17,818,562.46	21,120,639.46
2	Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ	14,827,483.90	14,554,691.95	14,554,691.95	16,459,793.45
3	Հայաստանի Հանրապետությանում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում	14,510,915.00	14,510,674.50	14,510,507.43	14,914,826.65
4	Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ	8,414,674.70	6,849,534.20	6,849,534.20	7,668,450.30
5	Հինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ	7,198,255.90	4,796,946.85	4,796,946.85	5,289,499.85
6	Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ	7,050,855.60	4,843,386.82	4,843,386.82	5,449,953.82
7	Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID) կանխարգելմանն ուղղված՝ պատվաստանյութի ձեռքբերման միջոցառումներ	4,960,827.10	2,544,443.11	2,290,071.31	2,290,071.31
8	Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	3,866,500.00	3,375,788.00	3,375,788.00	3,837,719.40
9	Շտապ բժշկական օգնության ծառայություններ	3,800,000.00	3,332,416.10	3,332,416.10	3,726,599.80

Իրականացված հաշվեքննության շրջանակներում բժշկական կազմակերպությունների կողմից փաստացի կատարողականի և դրա դիմաց Նախարարության կողմից կատարված վճարումների համապատասխանությունն ու արժանահավատությունը ստուգելու նպատակով իրականացվել է ԱՐՄԵԴ համակարգի կատարողականի տվյալների համադրում Գանձապետական համակարգի ԼՍ-Ֆայնանս համակարգի տվյալների հետ: Հաշվի առնելով այն, որ ծրագրային բյուջետավորման շրջանակներում ֆինանսավորումը իրականացվում է ըստ միջոցառումների, յուրաքանչյուրի համար առանձին գանձապետական հաշվի միջոցով, կատարողականի ուսումնասիրությունը ևս կատարվել է ըստ առանձին միջոցառումների՝ Նախարարության և բժշկական կազմակերպությունների միջև կնքված պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների հիման վրա: Իրականացված ուսումնասիրության արդյունքներն ըստ առանձին միջոցառումների ներկայացված է ստորև:

1. Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ միջոցառում

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ միջոցառումը բաղկացած է 17 ենթամիջոցառումներից (քառանիշ դասակարգում), որոնց իրականացման համար 2021թ. 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 17,872,773.9 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 8-րդ կետի համաձայն՝ *Բժշկական կազմակերպությունները ֆինանսավորվում են նախորդ հաշվետու ժամանակահատվածում փաստացի կատարված աշխատանքների ծավալի չափով, սակայն ոչ ավելի, քան պայմանագրերով սահմանված ֆինանսավորման չափաքանակները: Ելնելով բժշկական կազմակերպության ֆինանսական վիճակից և կանխատեսվող ծախսերի կարևորությունից՝ ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնում ներառված ծրագրերի կատարման՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված եռամսյակային համամասնությունների շրջանակներում պատվիրատուն առանձին կազմակերպությունների համար սահմանված կարգով հաշվարկված տարեկան պայմանագրային գումարների շրջանակներում կարող է հաստատել ֆինանսավորման անհատական համամասնություններ:*

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Նախարարությունը չի պահպանել վերոնշյալ որոշման պահանջը, քանի որ 2021թ. 9 ամիսների արդյունքներով Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ միջոցառման կատարողականը բոլոր կազմակերպությունների ցուցանիշների հանրագումարով կազմել է 18,958,137.8 հազ. դրամ, որը 1,085,363.9 հազ. դրամով ավելի է հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանից:

Ավելին, Նախարարության կողմից չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 14-րդ կետի պահանջները, համաձայն որի՝ Կազմակերպությունների պայմանագրային գումարների ամսական համամասնությունների գերազանցման դեպքում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց անհրաժեշտ բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում է հերթագրման եղանակով, իսկ հերթագրումից դուրս (արտահերթ) բժշկական օգնությունը կարող է կազմակերպվել որոշման N 4 հավելվածով սահմանված կարգով: Նախարարության կողմից վերոնշյալ պահանջների կատարման նկատմամբ չի իրականացվել մոնիթորինգ և հսկողություն, ինչի արդյունքում 30.09.2021թ. միջոցառման շրջանակներում արձանագրվել է 540,708.07 հազ. դրամի կասեցված ծառայություններ:

2021թ. 9 ամիսներին միջոցառման ֆինանսավորումը կազմել է 17,818,562.4 հազ դրամ, որը 54,211.4 հազ դրամով պակաս է հաշվետու ժամանկաշրջանի ճշտված պլանով սահմանված համամասնությունից: Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ միջոցառման ԲԳԿ (900001008839) և ԲՍԿ (900011018851) հաշիվների շարժի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2021թ. 9 ամիսներին միջոցառման ֆինանսավորման ընդհանուր գումարը հավասար է եղել Նախարարության կողմից ներկայացված ֆինանսավորման հայտի գումարին: Արդյունքում նախարարությունը 9 ամիսների արդյունքում թեև բժշկական կազմակերպությունների ընդունված կատարողականի շրջանակներում ունեցել է չկատարված պարտավորություններ, սակայն դրանով հանդերձ սահմանված չափից 54,211.4 հազ դրամով պակաս ֆինանսավորման հայտ է ներկայացրել, որի հետևանքով եռամսյակային համամասնությամբ հատկացված

ֆինանսական միջոցներն օգտագործվել են ոչ լիարժեք և գոյացել է լրացուցիչ կրեդիտորական պարտքեր:

Ավելին, Նախարարության կողմից Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումների իրականացումը ևս իրականացվել է ոչ արդյունավետ և անհամաչափ: Մասնավորապես, պայմանագրային պարտավորությունների շրջանակներում ծառայություն է մատուցվել 388 կազմակերպությունների կողմից, որոնց ընդհանուր կատարողականը կազմել է 18,958,137.8 հազ. դրամ, իսկ դրանց դիմաց վճարումների դրամարկղային ծախսը՝ 17,818,562.4 հազ դրամ:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել է, որ կատարողականի դիմաց պակաս վճարումները կազմակերպությունների միջև բաշխվել է խիստ անհամաչափ: Մասնավորապես միջոցառման շրջանակներում թվով 58 կազմակերպության (հիմնականում մարզային ԱԱՊ կազմակերպություններ) նախարարության կողմից կատարողականի դիմաց վճարումը կատարվել է ամբողջ ծավալով: Ի տարբերություն սրա 3 կազմակերպության՝ Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն ՓԲԸ, Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ և Օն կլինիք Անի ՍՊԸ 2021թ. 9 ամիսների 3,765,712 հազ. դրամ փաստացի կատարողականի դիմաց որևէ վճարում չի կատարվել: Թվով 13 կազմակերպությունների կատարողականից պակաս վճարումը կազմել է 10-28.3%, 156 կազմակերպությունների դեպքում՝ 5-10%, իսկ մնացածի դեպքում՝ 1-10%: Արձանագրվել է նաև, որ Նախարարության կողմից փաստացի հաստատված կատարողականի դիմաց ոչ ամբողջական և հատկապես անհամաչափ վճարումները խեղաթյուրումների էական ռիսկեր կարող են պարունակել:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում 9 ամսվա կտրվածքով կատարողականից առավել պակաս վճարված 30 կազմակերպությունների ցանկը ներկայացվում է ստորև, իսկ ամբողջական ցանկը՝ հավելված 1-ում:

Աղյուսակ 8

դրամ

	Անվանում	Ընդամենը Կատ	Ընդամենը վճարում	Պակաս վճարում	Պակաս վճարման տոկոս
1	Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿՓԲԸ	730,969,948	664,903,300	66,066,648	9.0
2	Թիվ 19 պոլիկլինիկա ՓԲԸ	516,467,504	477,944,400	38,523,104	7.5
3	Թիվ 20 պոլիկլինիկա ՓԲԸ	268,977,665	238,289,200	30,688,465	11.4
4	"Զարիշատ/Ախալ/ Անտին Ամրոյյանի անվան Սիմավիրի ԲԿՓԲԸ"	298,912,719	270,047,300	28,865,419	9.7
5	Թիվ 12 պոլիկլինիկա ՓԲԸ	262,956,403	234,583,700	28,372,703	10.8
6	Ռ.Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն ՓԲԸ	303,711,774	275,586,232	28,125,542	9.3
7	Արտաքսի բժշկական կենտրոն ՓԲԸ	267,275,681	242,253,100	25,022,581	9.4
8	Սուրբ Աստվածամայր ԲԿՓԲԸ	342,142,048	317,466,200	24,675,848	7.2

9	Հրազդանի բժշկական կենտրոն ՓԲԸ	315,921,679	292,411,700	23,509,979	7.4
10	Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա ՊՈԱԿ	224,065,178	202,721,700	21,343,478	9.5
11	Սիփան Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ	312,613,789	291,660,500	20,953,289	6.7
12	Նառալ ի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն	174,965,510	154,127,400	20,838,110	11.9
13	Գյումրու Առաքելոց Գրիգոր Նարեկացու անվան պոլիկլինիկա ՓԲԸ	169,348,216	149,971,800	19,376,416	11.4
14	Անասերֆարմ ՍՊԸ	73,255,779	56,278,900	16,976,879	23.2
15	Իջևանի ԱՄՊԿ ՓԲԸ	157,972,617	141,247,200	16,725,417	10.6
16	Անիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	180,460,154	164,007,915	16,452,239	9.1
17	Գորիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	175,956,572	159,708,499	16,248,073	9.2
18	Թիվ 8 պոլիկլինիկա ՓԲԸ	252,924,259	236,813,800	16,110,459	6.4
19	Աբովյանի պոլիկլինիկա ՓԲԸ	155,119,445	139,249,300	15,870,145	10.2
20	Նոր Սիսիանի ԱԿ ՓԲԸ	240,540,848	225,606,700	14,934,148	6.2
21	Թիվ 16 պոլիկլինիկա ՓԲԸ	222,392,424	207,776,400	14,616,024	6.6
21	Թիվ 22 պոլիկլինիկա ՓԲԸ	172,079,222	157,824,200	14,255,022	8.3
23	Աջափնյակի բժշկական կենտրոն ՓԲԸ	191,737,706	177,978,298	13,759,408	7.2
24	Կ. Եսայանի անվան պոլիկլինիկա ՓԲԸ	197,872,044	184,400,100	13,471,944	6.8
25	Կապանի բժշկական կենտրոն ՓԲԸ	233,882,958	221,147,500	12,735,458	5.4
26	Աբինսերլ և ՍՊԸ (Վարդանանց ԱԲԳ)	118,234,936	105,750,700	12,484,236	10.6
27	Գյումրու Էնրիկո Անտեի անվան պոլիկլինիկա ՓԲԸ	156,225,023	143,863,500	12,361,523	7.9
28	Չարենցավանի բժշկական կենտրոն ՓԲԸ	166,346,429	154,295,110	12,051,319	7.2
29	Թիվ 13 պոլիկլինիկա ՓԲԸ	178,467,381	166,849,097	11,618,284	6.5
30	Էջմիածին ԲԿ ՓԲԸ	310,033,412	298,741,500	11,291,912	3.6

2. Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառումը բաղկացած է 4 ենթամիջոցառումներից, որոնց իրականացման համար 2021թ. 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 14,827,483.90 հազ. դրամ:

2021թ. 9 ամիսների արդյունքներով Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառման կատարողականը բոլոր կազմակերպությունների ցուցանիշների հանրագումարով կազմել է 14,768,062,618 1 հազ. դրամ, իսկ միջոցառման ֆինանսավորումը՝ 14,554,691.95 հազ. դրամ, որը 272,791.95 հազ. դրամով պակաս է հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով սահմանված համամասնությունից:

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառման ԲԳԿ և ԲՍԿ հաշիվների շարժի հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2021թ. 9 ամիսների ընթացքում միջոցառման ֆինանսավորման ընդհանուր գումարը հավասար է եղել Նախարարության կողմից ներկայացված ֆինանսավորման հայտի գումարին, ինչը նշանակում է որ 9 ամիսների արդյունքում Նախարարությունը պետական բյուջեից ֆինանսավորման համար 272,791.95

հազ դրամով պակաս ֆինանսավորման հայտ է ներկայացրել, ինչն էլ հանգեցրել է եռամսյակային համամասնությամբ հատկացված ֆինանսական միջոցների ոչ լիարժեք օգտագործման և լրացուցիչ կրեդիտորական պարտքերի առաջացման:

Նախարարության միջոցառման շրջանակներում կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումների իրականացումը ևս իրականացվել է ոչ արդյունավետ և անհամաչափ: Մասնավորապես, պայմանագրային պարտավորությունների շրջանակներում ծառայություն է մատուցվել 140 կազմակերպությունների կողմից, որոնց ընդհանուր կատարողականը կազմել է 14,768,062.6 հազ. դրամ, իսկ դրանց դիմաց վճարումների դրամարկղային ծախսը՝ 14,554,691.9 հազ. դրամ:

Ելնելով վերոգրյալից, արձանագրվել է, որ Նախարարությունը չի օգտագործել 9 ամիսների ճշգրտված պլանի շրջանակներում եռամսյակային համասնությամբ սահմանված ֆինանսական միջոցները, ինչի արդյունքում կազմակերպությունների հանդեպ արհեստականորեն առաջացել է կրեդիտորական պարտք 213,370.6 հազ. դրամի չափով: Մինչդեռ եռամսյակային համամասնությամբ սահմանված գումարը լիարժեք բավարար էր միջոցառման շրջանակներում բժշկական կազմակերպությունների փաստացի կատարողականի դիմաց վճարումները ամբողջությամբ կատարելու համար:

Կատարողականի դիմաց պակաս վճարումները կազմակերպությունների միջև բաշխվել է խիստ անհամաչափ, ինչը էական ռիսկեր կարող է պարունակել: Մասնավորապես միջոցառման շրջանակներում 58 կազմակերպության նախարարության կողմից կատարողականի դիմաց վճարումը կատարվել է ամբողջ ծավալով, 6 կազմակերպության թերի վճարումները կազմել են կատարողականի 10-ից մինչև 38%-ը, 37 կազմակերպության 3-10%, իսկ մնացած կազմակերպություններին՝ մինչև 3%:

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում 9 ամսվա կտրվածքով կատարողականից առավել պակաս վճարված 20 կազմակերպությունների ցանկը ներկայացվել է ստորև, իսկ ամբողջական ցանկը՝ հավելված 1-ում:

Աղյուսակ 9

դրամ

ՀՎՀՀ	Անվանում	Ընդամենը Կատարողական	Ընդամենը վճարում	Պակաս վճարում	Պակաս վճարման տոկոս
04600372	"Քեվորք եվ Անիթա Փակումեանների հիշատակի Հիսուսի Մանուկներ ԱԿ ՓԲԸ"	1,826,178,248	1,797,767,761	28,410,487	1.56
01508793	Նորք Մարաշ ԲԿ ՓԲԸ	1,446,098,890	1,421,445,200	24,653,690	1.70
03804631	Մասիսի բժշկական կենտրոն ՓԲԸ	983,570,960	967,622,070	15,948,890	1.62
06805245	Արևաշողի ԱԱՊԿ ՊՈԱԿ	121,305,400	107,688,700	13,616,700	11.23
03522199	Ռ. Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն ՓԲԸ	696,954,330	684,822,300	12,132,030	1.74
01203444	Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն ՓԲԸ	694,870,400	685,194,100	9,676,300	1.39
00000413	Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ ՓԲԸ	178,753,600	170,955,700	7,797,900	4.36

02569999	Արինտերլև ՍՊԸ (Վարդանանց ՆԲԿ)	144,886,000	138,626,800	6,259,200	4.32
01503749	Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն ՓԲԸ	379,224,480	373,315,070	5,909,410	1.56
01203239	ՀԿԽԸ Գրացիա ՄՎԿ ՍՊԸ	129,630,200	123,974,500	5,655,700	4.36
07806452	Մոսեսգեղի ԱԱՊԿ ՊՈԱԿ	141,958,600	137,164,200	4,794,400	3.38
09810225	Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն ՊՈԱԿ	364,533,190	359,824,740	4,708,450	1.29
02508131	Նաիրի բժշկական կենտրոն ՓԲԸ	92,305,450	87,619,450	4,686,000	5.08
01806759	Հանրապետական Վերականգնողական Կենտրոն ՓԲԸ	89,029,000	85,145,800	3,883,200	4.36
04220707	Արտաշատի բժշկական կենտրոն ՓԲԸ	247,887,900	244,324,000	3,563,900	1.44
07401863	Բագրատաշենի ԳԲԱ ՊՈԱԿ	22,704,900	19,494,000	3,210,900	14.14
05510611	Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա ՓԲԸ	10,920,000	8,034,000	2,886,000	26.43
03804751	Ռանչպարի ԲԱ ՀՈԱԿ	149,799,750	147,197,500	2,602,250	1.74
05502305	Գյումրու Ա.Կուպերսթոքի անվան վերականգնողական կենտրոն	57,906,000	55,402,200	2,503,800	4.32
05502201	Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա ՓԲԸ	143,626,900	141,153,400	2,473,500	1.72

3. Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ

Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառումը բաղկացած է մեկ ենթամիջոցառումից, որի իրականացման համար 2021թ. 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 8,414,674.7 հազ. դրամ, փաստացի կատարողականը՝ 6,850,188.6 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 6,849,534.2 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ի տարբերություն նախորդ միջոցառումների, սույն միջոցառման շրջանակներում նախարարության կողմից լիարժեք ֆինանավորվել են ծառայություն մատուցած բոլոր կազմակերպությունները՝ համաձայն կատարողականի ծավալների: Բացառություն է կազմել միայն Գյումրու ծննդատուն ՓԲԸ-ի վճարումը, ինչը պայմանավորված է վերջինիս Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի հետ միավորմամբ, որի արդյունքում կատարողականի գումարը փոխանցվել է Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ին:

Միջոցառման շրջանակներում մյուս բժշկական կազմակերպություններին կատարողականի դիմաց փաստացի վճարումների տարբերությունը եղել է ոչ էական:

4.Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ

Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառումը բաղկացած է 4 ենթամիջոցառումից, որի իրականացման համար 2021թ. 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 7,198,255.90 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 4,796,946.85 հազ. դրամ, արդյունքում 9 ամիսների փաստացի կատարողականը 2,401,309.05 պակաս է եղել ժամանակահատվածի ճշտված պլանից: ԱՐՄԵԴ

համակարգի տվյալների համաձայն միջոցառման կատարողականը կազմել է 4,795,968.8 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում իրականացված ֆինանսավորումը 977,960 դրամով ավելի է կատարողականից: Մասնավորապես՝ թվով 3 կազմակերպությունների նախարարության կողմից վճարվել է կատարողկանից ավելի, որի հետևանքով Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 4 մարտի 2004 թվականի թիվ 318-Ն որոշման 8րդ կետի պահանջները, որի համաձայն՝ *Կազմակերպությունը ֆինանսավորվում է պատվիրատուի կողմից՝ բյուջեների կատարման կարգը սահմանող՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի շրջանակներում կանխավճար չի տրամադրվում:*

Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում 9 ամսվա կտրվածքով կատարողականից ավելի վճարված կազմակերպությունների ցանկը ներկայացվում է ստորև, իսկ ամբողջական ցանկը հավելված 1-ում:

Աղյուսակ 10

դրամ

ՀՎՀՀ	Անվանում	Ընդամենը Կատ.	Ընդամենը վճարում	Ավել/պակաս վճարում
02235034	Սու բբ Աստվածամայ ր ԲԿՓԲԸ	3,867,000	4,473,300	(606,300)
09420382	Կապանի բժշկական կենտրոն ՓԲԸ	3,509,000	3,809,000	(300,000)
05539526	Գյ ումրու բժշկական կենտրոն ՓԲԸ	82,900,350	83,180,350	(280,000)
00194198	ՋենոմաՄՊԸ	333,000	405,000	(72,000)

5. Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ

Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ միջոցառումը բաղկացած է 2 ենթամիջոցառումներից, որի իրականացման համար 2021թ. 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 7,050,855.60 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 4,843,386.82 հազ. դրամ, արդյունքում 9 ամիսների փաստացի կատարողականը 2,207,468.78 հազ. դրամով պակաս է եղել ժամանակահատվածի ճշտված պլանից: ԱՐՄԵԴ համակարգի տվյալների համաձայն միջոցառման կատարողականը կազմել է 4,848,467.6 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում Նախարարության կողմից լիարժեք ֆինանսավորվել են ծառայություն մատուցած բոլոր կազմակերպությունները համաձայն կատարողականի ծավալների: Բացառություն է կազմել միայն Գյումրու ծննդատուն ՓԲԸ-ի կատարողականի վճարումը, ինչը պայմանավորված է վերջինիս Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի հետ միավորմամբ, որի արդյունքում կատարողականի գումարը փոխանցվել է Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ-ին: Միջոցառման շրջանակներում մյուս

բժշկական կազմակերպություններին կատարողականի դիմաց փաստացի վճարումների տարբերությունը եղել է ոչ էական:

6. Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ միջոցառումը բաղկացած է 3 ենթամիջոցառումներից, որոնց իրականացման համար 2021թ. 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 3,866,500.0 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ 2021թ. 9 ամիսների արդյունքներով Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ միջոցառման կատարողականը բոլոր կազմակերպությունների ցուցանիշների հանրագումարով կազմել է 3,434,668.8 հազ. դրամ, իսկ միջոցառման ֆինանսավորումը կազմել է 3,375,788.00 հազ. դրամ, որը 490,712.0 հազ. դրամով պակաս է հաշվետու ժամանկաշրջանի ճշտված պլանով սահմանված համամասնությունից:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ միջոցառման ԲԳԿ և ԲՍԿ հաշիվների շարժի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ 2021թ. 9 ամիսների ընթացքում միջոցառման ֆինանսավորման ընդհանուր գումարը հավասար է եղել Նախարարության կողմից ներկայացված ֆինանսավորման հայտի գումարին, ինչը նշանակում է որ 9 ամիսների արդյունքում Նախարարությունը պետական բյուջեից ֆինանսավորման համար 490,712.0 հազ. դրամով պակաս ֆինանսավորման հայտ է ներկայացրել, ինչն էլ հանգեցրել է եռամսյակային համամասնությամբ հատկացված ֆինանսական միջոցների ոչ լիարժեք օգտագործման և լրացուցիչ կրեդիտորական պարտքերի առաջացման:

Միջոցառման շրջանակներում կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումների իրականացումը ևս իրականացվել է ոչ արդյունավետ և անհամաչափ: Մասնավորապես, պայմանագրային պարտավորությունների շրջանակներում ծառայություն է մատուցվել 24 կազմակերպությունների կողմից, որոնց ընդհանուր կատարողականը կազմել է 3,434,668.8 հազ. դրամ, իսկ դրանց դիմաց վճարումների դրամարկղային ծախսը՝ 3,375,788.0 հազ. դրամ:

Ելնելով վերոգրյալից, արձանագրվել է, որ Նախարարությունը չի օգտագործել 9 ամիսների ճշգրտված պլանի շրջանակներում եռամսյակային համամասնությամբ սահմանված ֆինանսական միջոցները, ինչի արդյունքում կազմակերպությունների հանդեպ արհեստականորեն առաջացել է կրեդիտորական պարտք 58,880.8 հազ. դրամի չափով: Մինչդեռ, եռամսյակային համասնությամբ ահմանված գումարը լիարժեք բավարար էր միջոցառման շրջանակներում բժշկական կազմակերպությունների փաստացի կատարողականի դիմաց վճարումները ամբողջությամբ կատարելու համար:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ կատարողականի դիմաց պակաս վճարումները կազմակերպությունների միջև բաշխվել է խիստ անհամաչափ, ինչը էական ռիսկեր կարող է պարունակել: Մասնավորապես միջոցառման շրջանակներում 5 կազմակերպության նախարարության կողմից կատարողականի դիմաց վճարումը կատարվել է ամբողջ ծավալով, 2 կազմակերպության թերի վճարումները կազմել են կատարողականի 8%-ը, 1 կազմակերպության՝ 3%-ը, իսկ մնացած կազմակերպություններին՝ մինչև 2%:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում 9 ամսվա կտրվածքով կազմակերպությունների կատարողականների և վճարումների ցանկը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 11

դրամ

ՀՎՀՀ	Անվանում	Կատարողական	Ֆինանսավորում	Պակաս վճարում	Տոկոս
01002804	Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ	1,396,949,492	1,370,487,100	26,462,392	1.89
02508131	Նաիրի բժշկական կենտրոն ՓԲԸ	113,482,400	103,542,700	9,939,700	8.76
00800135	Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ ՓԲԸ	315,766,700	309,801,100	5,965,600	1.89
01222567	Նատալի ֆարմ ՍՊԸ Աստղիկ բժշկական կենտրոն	200,280,660	196,659,700	3,620,960	1.81
00403857	Էրեբունի բժշկական կենտրոն ՓԲԸ	121,324,000	119,460,800	1,863,200	1.54
00804703	Արթմեդ ԲՎԿ ՓԲԸ	231,906,850	230,383,600	1,523,250	0.66
00007748	Իզմիրլյան ԲԿ	80,000,600	78,522,000	1,478,600	1.85
00124396	Մեդլայն կլինիկ ՍՊԸ	89,267,804	87,849,600	1,418,204	1.59
00902513	Իրա Մեդիքլ Գրուպ ՓԲԸ	70,679,500	69,344,000	1,335,500	1.89
02204515	Շենգավիթ. բժշկական կենտրոն ՓԲԸ	66,365,780	65,246,000	1,119,780	1.69
06945592	Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ	64,532,694	63,449,600	1,083,094	1.68
05502356	Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր ՓԲԸ	27,863,160	26,893,100	970,060	3.48
01203375	Արմենիա ՀԲԿ	56,365,100	55,535,700	829,400	1.47
02269643	Սանիտա ՍՊԸ /Տոնոյան ԲԿ/	25,256,000	24,876,900	379,100	1.50
01503448	Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ	24,103,000	23,759,100	343,900	1.43
00218915	Հեսու Մեդ ՍՊԸ	3,537,340	3,250,000	287,340	8.12
02235034	Սուրբ Աստվածամայր ԲԿ ՓԲԸ	15,495,000	15,248,900	246,100	1.59
00441242	Գրիգոր Նարեկացի ԲԿ ՓԲԸ	3,488,000	3,473,400	14,600	0.42

7. Շտապ բժշկական օգնության ծառայություններ

Շտապ բժշկական օգնության ծառայություններ միջոցառումը բաղկացած է 1 ենթամիջոցառումից, որի իրականացման համար 2021թ. 9 ամիսների ճշտված պլանը կազմել է 3,800,000.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 3,332,416.1 հազ. դրամ, արդյունքում 9 ամիսների փաստացի կատարողականը 467,583.90 հազ. դրամով պակաս է եղել ժամանակահատվածի ճշտված պլանից: Համաձայն ԱՐՄԵԴ համակարգի տվյալների՝ միջոցառման կատարողականը կազմել է 3,333,382,870.0 հազ. դրամ:

Հաշվեքննությամբ արձանագրվել է, որ Շտապ բժշկական օգնության ծառայություններ միջոցառման շրջանակներում Նախարարության կողմից լիարժեք ֆինանավորվել են ծառայություն մատուցած բոլոր կազմակերպությունները՝ համաձայն կատարողականի ծավալների: Բացառություն է կազմում միայն Իջևանի ԱԱՊԿ ՓԲԸ-ն, որի կողմից փաստացի մատուցված 965,000 դրամի կատարողականի դիմաց Նախարարության կողմից վճարում չի իրականացվել: Միջոցառման շրջանակներում մյուս բժշկական կազմակերպություններին կատարողականի դիմաց փաստացի վճարումների տարբերությունը եղել է ոչ էական:

ԱՆ դիրքորոշում: *Նախարարության կողմից ներկայացվել են աղյուսակներ և Ջենոմա ՍՊԸ-ի կողմից 09.09.2021թ. 72 000 դրամի չափով պետական բյուջե կատարած փոխանցման վերաբերյալ բանկային քաղվածք:*

Հաշվեքննողի արձագանք: *ԱՆ կողմից ներկայացված աղյուսակներում կատարողականից պակաս վճարման ցուցանիշները համընկնում են հաշվեքննություն իրականացնող խմբի հաշվարկներին, ինչը ևս մեկ անգամ փաստում է արձանագրված խնդրի առկայությունը:*

Ջենոմա ՍՊԸ-ին ավել վճարման վերադարձի վերաբերյալ տեղեկատվությունն ընդունվել է որպես ի գիտություն, իսկ մյուս բժշկական կազմակերպություններին ավել վճարումների վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասով ԱՆ կողմից տեղեկատվություն չի ներկայացվել:

Ծանոթություն 2022թ. հունվարի 24-ի դրությամբ ԱՆ կողմից արձանագրված այլ անհամապատասխանությունների և խեղաթյուրումների մասին արձագանք չի ստացվել: Հունվարի 25-ին ԱՆ նախարարի կողմից ստացվել է միայն «Պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայություններ» բաժնի վերաբերյալ արձագանքը, «Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ» ծրագրի վերաբերյալ արձագանքը հավաստվել է, որ կներկայացվի սույն թվականի հունվարի 31-ին:

Եզրահանգում.

- ***Նախարարության կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 04.03.2004թ. թիվ 318-Ն որոշման 8-րդ կետի պահանջները, կազմակերպությունների համար ֆինանսավորման անհատական համամասնությունները սահմանելիս չի պահպանվել պետական բյուջեով սահմանված եռամսյակային համամասնությունները:***
- ***2021թ. 9 ամիսներին Նախարարության կողմից չի իրականացվել պատշաճ հսկողություն համամասնությունները գերազանցող ծավալների դեպքում***

բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց հերթագրում իրականացնելու նկատմամբ, ինչի արդյունքում 2021թ. 9 ամիսների կատարողականը գերազանցել է հաշվետու ժամակահատվածի ճշգրտված պլանը 1,085,363.9 հազ. դրամով, իսկ ևս 540,708.07 հազ. դրամի չափով մատուցված ծառայություններ կասեցված են:

- *Մի շարք միջոցառումների համար Նախարարության կողմից պետական բյուջեից ֆինանսավորման 9 ամսվա համար նախատեսված ճշգրտված պլանից պակաս ֆինանսավորման հայտ է ներկայացվել, ինչն էլ հանգեցրել է եռամսյակային համամասնությամբ հատկացված ֆինանսական միջոցների ոչ լիարժեք օգտագործման և լրացուցիչ կրեդիտորական պարտքերի առաջացման:*
- *Նախարարությունը կազմակերպությունների կողմից ներկայացված կատարողականների դիմաց վճարումները իրականացրել է ոչ լիարժեք, կամայական սկզբունքով:*
- *Մի շարք միջոցառումների դեպքում հաշվետու ժամանակահատվածի ճշգրտված պլանը զգալիորեն գերազանցել է փաստացի կատարողական ցուցանիշը, ինչը հետևանք է ոչ ճիշտ պլանավորման և պետական բյուջեի միջոցների ոչ արդյունավետ բաշխման:*